




Մարդկային զարգացման  
միջազգային կենտրոն

## Ինչու և ինչքան բարձրացնել ծխախոտի հարկերը Հայաստանում



- Բնակչության միջին իրական եկամուտների աճը
- Ծխախոտի միջին իրական գների փոփոխություն

**-21.3%**

**Մարդկային զարգացման  
միջազգային կենտրոն**

**Ինչու և ինչքան բարձրացել  
ծխախոտի հարկերը  
Հայաստանում**

**Երևան 2006**

Մարդկային զարգացման  
միջազգային կենտրոն

Ինչու և ինչքան բարձրացել  
ծխախոտի հարկերը  
Հայաստանում

Սույն գրքույկը տպագրվել է Բաց հասարակության ինստիտուտի  
աջակցության հիմնադրամի կողմից Մարդկային զարգացման  
միջազգային կենտրոնին տրամադրված դրամաշնորհի  
շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների եւ  
վերլուծությունների հիման վրա: Այն փաստարկում է  
Հայաստանում ծխախոտի հարկման դրույքաչափերի ավելացման  
անհրաժեշտությունը և առաջ քաշում համապատասխան  
սցենարներ:

This publication was supported by a grant of the Open Society  
Institute Assistance Foundation. It advocates for the need to raise  
tobacco taxes in Armenia and suggests relevant scenarios. The  
project has been conducted by the International Center for Human  
Development.

---

## Համառոտագիր

Ցանկացած երկրի (անկախ դրանում առկա եկամուտների մակարդակից) փորձը վկայում է, որ ակցիազային հարկի ավելացման ճանապարհով ծխախոտի գների բարձրացումն ամենաարդյունավետ միջոցն է՝ ստիպելու ծխողներին հրաժարվել մահաբեր այդ սովորույթից, ինչպես նաև կանխելու ծխողների բանակը սկսնականերով համալրելու գործընթացը: Հակածխախոտային պայքարի առաջամարտիկ համարվող երկրներում վաղուց արդեն հարկերի բարձրացման ճանապարհով ծխախոտի գների աստիճանական ավելացումը դարձել է ոլորտում իրականացվող պետական երկարաժամկետ քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

2000-2004թթ. ընթացքում Եվրամիության 25 երկրներում ծխախոտի իրական գներն աճել են միջինը մոտ 30 տոկոսով, այն դեպքում, երբ բնակչության իրական եկամուտների աճը կազմել է 13.5 տոկոս: Այսինքն եկամուտների աճի համեմատ ծխախոտը թանկացել է առաջանցիկ տեմպերով, ինչը լիովին տեղավորվում է բնակչության առողջության պահպանմանն ուղղված արդյունավետ քաղաքականության տրամաբանության շրջանակներում:

Հայաստանում պատկերը հակառակն է: Միայն 2000-2004թթ. ժամանակահատվածում ծխախոտի միջին իրական գները Հայաստանում ավելի քան 21 տոկոսով անկում են ապրել այն պայմաններում, երբ բնակչության իրական եկամուտները նույն ժամանակահատվածում աճել են ավելի քան 56 տոկոսով: Իբրև միտում, սա ուղղակիորեն հակառակ է եվրոպականին: Եվրոպական Միությունում ծխախոտը տարեց տարի ավելի անհասանելի է դառնում բնակչության, հատկապես դրա առավել խոցելի խմբերի համար, իսկ Հայաստանում ճիշտ հակառակը՝ մահաբեր ապրանքն ավելի ու ավելի մատչելի է դառնում բոլորի, այդ թվում՝ հատկապես աղքատների, երիտասարդների ու երեխաների համար:

Տեսության և այլ երկրների փորձի հիման վրա կատարված հաշվարկները վկայում են, որ 1000 հատիկ ծխախոտից այսօր Հայաստանում հարկվող 5000 դրամ հարկի դրույքաչափն առնվազն 10000 դրամի հասցնելն այն նվազագույն անհրաժեշտ քայլն է, որ թույլ կտա, ավելացնելով պետբյուջեի եկամուտները, քայլ անել դեպի հանրային առողջությանն ուղղված ավելի արդյունավետ քաղաքականություն:

---

# Նախարան

---

Համաձայն պաշտոնական վիճակագրության տվյալների՝ վերջին տարիների ընթացքում քաղցկեղով հիվանդների քանակը Հայաստանում գնալով ավելանում է: Սրտի և սիրտանոթային հիվանդությունների քանակը նույնպես աճի միտում ունի: Քաղցկեղի և սիրտանոթային հիվանդությունների հետևանքով 2003թ. մահացությունը կազմել է ընդհանուր մահացության 72 տոկոսը: Հայտնի է, որ այդ հիվանդությունների առաջացման ամենամեծ ռիսկի գործոններից է ծխելը:

2000թ. տվյալներով (1) Հայաստանում արձանագրված մահացության դեպքերի 33%-ը ծխելու արդյունք են հանդիսացել: Ավելին, շնչառական օրգանների հիվանդություններից մահացությունների 71.3%-ը ծխելու հետևանք է եղել, սրտի հիվանդություններից մահացությունների՝ մոտ 30%-ը և թոքերի քաղցկեղի հետևանքով մահերի՝ 92.3%-ը: Առհասարակ, բոլոր տեսակի քաղցկեղներից մահացության առնվազն 48%-ը Հայաստանում կապված է եղել ծխելու հետ (տվյալները վերաբերում են 35-69 տարեկան արական սեռի ներկայացուցիչներին):

Իրականացվող քաղաքականության գերակայություններում հոգուտ ծխախոտային կարգավորման փոփոխություններ մտցնելու անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ փաստարկներով.

1. Հայաստանում տարեկան ծխախոտի հետևանքով մահանում է շուրջ 3000 մարդ, ինչն, օրինակ, մոտ 3 անգամ ավել է, քան մահերը դժբախտ պատահարներից, թունավորումներից և այլն,
2. հաշվարկները վկայում են, որ եթե ծխախոտ գնելու փոխարեն մարդիկ այդ գումարներն ուղղեին սպառողական ապրանքների ձեռքբերմանը, ապա Հայաստանում մոտ 200 հազար մարդ կդադարեր համարվել աղքատ<sup>1</sup>,
3. չնայած զարգացող ծխախոտային արդյունաբերությանը՝ Հայաստանը մնում է ծխախոտ ներմուծող երկիր. տարեկան արտահանման քանակը ծածկում է ներմուծման միայն 10%-ը: Արտարժութային

---

<sup>1</sup>. համաձայն մեկ շնչի հաշվով նվազագույն 2100 կկալ-ի էներգիայի ապահովման վրա հիմնված մեթոդաբանության

շուկայի վրա ծխախոտի առևտրի բացասական ազդեցության մասը տարեկան կազմում է մոտ 30 մլն դոլար: Ի դեպ նշենք, որ այդ մեծություները համեմատական է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ստացվող վարկերի ծավալին, որոնք նպատակ ունեն կայունացնել հենց նույն արտարժույթի շուկան,

4. Հայաստանը պարզապես չի կարող անմասն մնալ առաջադեմ աշխարհի նախաձեռնություններից, որոնք նպատակ ունեն մարդկային կյանքն ավելի առողջ և ապահով դարձնել:

Փաստարկների այս ցուցակը կարելի է շարունակել:

Հայտնի է, որ ծխախոտի հետևանքով առաջացած մահացության դեպքերը կարող են կանխվել շնորհիվ ծխախոտի հարկերի բարձրացման, զովազդային սահմանափակումների, հանրային իրազեկվածության բարձրացման և այլն: Նշված միջոցառումները Հայաստանում արդյունավետ իրականացնելու կարիք ունեն:


# **Ծխախոտի հարկերի բարձրացման ազդեցությունը**

Ցանկացած երկրի (անկախ դրանում առկա եկամուտների մակարդակից) փորձը վկայում է, որ ակցիազային հարկի ավելացման ճանապարհով ծխախոտի գների բարձրացումն ամենաարդյունավետ միջոցն է՝ ստիպելու ծխողներին հրաժարվել մահաբեր այդ սովորույթից, ինչպես նաև կանխել նոր ծխողների բանակի կայացումը: Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների, ծխախոտի գների 10 տոկոս աճը եկամուտների բարձր մակարդակ ունեցող երկրներում հանգեցնում է ծխախոտի սպառման մոտ 4 տոկոս կրճատման, իսկ միջին և ցածր եկամուտներով երկրներում՝ մինչև 8 տոկոս: Չնայած այն հանգամանքին, որ հարկերի բարձրացումը բերում է սպառման զգալի կրճատման, այնուամենայնիվ, այն հանգեցնում է պետություն չհավաքագրվող հարկերի էական ավելացման: Ծխախոտից հավելյալ հարկեր հավաքագրելու ամենամեծ ներուժ ունեն հենց Հայաստանի պես երկրները, որտեղ հարկերի տոկոսային մասնաբաժինը ծխախոտի գնի մեջ հարաբերականորեն ցածր է, ինչը զգալի տեղ է թողնում գների ավելացման և հավելյալ հարկային եկամուտների հավաքագրման համար: Հարկերի բարձրացման հակառակորդներն առավել հաճախ բերում են այն փաստարկը, որ գների բարձրացման հետևանքով նվազող սպառումը ծխախոտային արդյունաբերության մեջ կհանգեցնի աշխատատեղերի կրճատմանը: Սակայն առկա փորձը վկայում է, որ ծխախոտային արդյունաբերությանն ուղղվող ռեսուրսները սովորաբար ուղղվում են այլ ապրանքների ու ծառայությունների արտադրությանը՝ կորցրածների փոխարեն ստեղծելով նոր աշխատատեղեր:

## **Հարկերի բարձրացման ազդեցությունը ծխախոտային արտադրանքի հանդեպ պահանջարկի վրա**

Հետազոտությունները վկայում են, որ ծխախոտի հարկերի ավելացումը հանգեցնում է գների բարձրացման: Բազմաթիվ հետազոտական խմբեր տարբեր ժամանակահատվածներում և աշխարհի ամենատարբեր ծայրերում տարիներ շարունակ ուսումնասիրել են ծխողների ռեակցիան ծխախոտի գների տատանումների նկատմամբ: Հետազոտությունների գերակշիռ մեծամասնությունն ուժեղ բացասական կապ է արձանագրել գների փոփոխության և սպառման փոփոխության միջև: Հայտնի է, որ պահանջարկի էլաստիկությունն ապրանքի հանդեպ պահանջարկի միավոր փոփոխության հարաբերակցությունն է գնի միավոր փոփոխությանը: Պահանջարկն աճում է, երբ գինը նվազում է. դա ակնառու երևում է գծապատկեր 1-ից:

Գծապատկեր 1. Ծխախոտի հարաբերական՝ ինֆլացիայով ճշգրտված գները և մեկ շնչի հաշվով ծխախոտի օրական սպառումը, Ֆրանսիա, 1960-2000:




Աղբյուրը (2)

Ավելին, Ֆրանսիայում ծխախոտի սպառման ծավալների մի քանի տասնամյակ տևած հետազոտության արդյունքներում ստացվել է  $-0.3$  գնային էլաստիկություն (2): Ընդհանուր առմամբ բնակչության բարձր եկամուտ ունեցող երկրներում կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները բացահայտել են պահանջարկի մոտ 4 տոկոս կրճատում գների 10 տոկոս բարձրացման պայմաններում, ինչը համապատասխանում է  $-0.4$  տոկոս գնային էլաստիկությանը (3, 4, 5):

Ծխախոտի գների բարձրացման հանդեպ հատկապես «խոցելի» են անչափահաս ծխողները, որոնց սոցիալական դրությունն ու ծխելու համեմատաբար կարճ պրակտիկան ստիպում/թույլ են տալիս ավելի շուտ ազատվել վտանգավոր այդ սովորույթից: Այսպես, 1979-1991թթ. ժամանակահատվածում ծխախոտի իրական գները Կանադայում 2.09 ԱՄՆ դոլարից հասել են 5.42-ի, ինչի հետևանքով 15-ից 19 տարեկանների շրջանում ծխողների տեսակարար կշիռը 42-ից նվազել է մինչև 16 տոկոսի (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Ծխախոտի գները և ծխողների տեսակարար կշիռն անչափահասների մեջ, Կանադա, 1978-1992:



Աղբյուրը (10)

Միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներում դիտարկվել է պահանջարկի առավել բարձր գնային էլաստիկություն, որը տատանվել է -0.6-ից -1-ի միջակայքում: Այսօրինակ երկրների համար միջազգային պրակտիկայում ընդունված է կիրառել -0.8 միջին էլաստիկության մակարդակը (3, 6):

Հետազոտությունները նաև ցույց են տվել, որ սպառողների մի մասը գների բարձրացմանն արձագանքում է՝ անցնելով ավելի էժան սիգարետների օգտագործման (7, 8): Հետևաբար ծխախոտի սպառման ընդհանուր ծավալների կրճատում ունենալու համար հարկերը պետք է բարձրացվեն միաժամանակ ծխախոտի բոլոր տեսակների համար այնպես, որ ապահովվի ծխախոտի արտադրատեսակների գների տարբերության մի մակարդակ, որի դեպքում ծխախոտի մի տեսակից մյուսին անցնելու խնդիրը նվազագույնի հասցվի:

---

## Չարկերի ազդեցությունը ծխախոտի գնի վրա

Չարկերի բարձրացման հետևանքով ծխախոտի գնի աճի կանխատեսումը կարևորագույն դեր ունի ծխախոտի նկատմամբ կիրառվող հարկերի ճիշտ դրույքաչափերի սահմանման հարցում: Խոսքը վերաբերում է այնպիսի հարկային քաղաքականությանը, որի նպատակը ոչ միայն բյուջետային եկամուտների ապահովումն է, այլ նաև գնային լծակների օգնությամբ ծխելուց հրաժարվողների թվի ավելացման միջոցով ծխելու համաճարակի սանձումը:

Ինչպես նշել ենք վերը, գնային լծակները համարվում են ծխախոտի տարածվածության կրճատման ամենարդյունավետ գործիքը, իսկ այդ արդյունավետության չափը պայմանավորված է ծխախոտի առանձին շուկաներում ստեղծված իրավիճակից:

Ընդհանուր առմամբ միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներում ծխախոտի հարկերն ավելի ցածր մակարդակ ունեն, քան բարձր եկամուտ ունեցող երկրներում: Գները համեմատաբար «հարուստ» երկրներում համապատասխանաբար ավելի բարձր են: Դրանք սովորաբար կազմում են ծխախոտի գնի ավելի քան 2/3-ը:

Այնպիսի շուկաներում, որտեղ մրցակցությունը բարձր է, կարելի է ակնկալել, որ հարկի դրույքի ցանկացած ավելացում անմիջապես և ամբողջապես կարտացուլի ապրանքի գնի վրա՝ հարկային բեռն ուղղելով վերջնական սպառողների ուներին: Հակառակ դեպքում, երբ գործ ունենք մի կողմից մենաշնորհային շուկաների, մյուս կողմից ոլորտում առկա գերշահույթների ստացման երևույթի հետ (հաշվի առնելով այն փաստը, որ սովորաբար ծխախոտի ինքնարժեքը շատ անգամ ցածր է վաճառքի գնից) չի բացառվում, որ ծխախոտ արտադրողը հարկերի հավելյալ բեռը կվերցնի իր վրա՝ չկամենալով ավելացնել իր արտադրանքի գինը: Պետք է նշել, որ իրականում նշվածի փոխարեն առավելապես հանդիպում են օլիգոպոլ շուկաներ, որտեղ գործում են վերջնական գնի վրա հարկերի արտացուլման յուրահատուկ մեխանիզմներ: Համաձայն մի շարք էմպիրիկ տվյալների՝ այն երկրներում, որտեղ օլիգոպոլիաները միմյանց հետ քիչ են համագործակցում, հարկերի ավելացումը միայն մասամբ է անդրադառնում գնի վրա, քանի որ արտադրողները միմյանց հետ մրցում են ցածր գների միջոցով: Սակայն ավելի հաճախ հանդիպում են այնպիսի շուկաներ, որտեղ առկա է համեմատաբար ավելի կոորդինացված համագործակցություն: Այդ շուկաներում հարկերի բարձրացումն ամբողջապես, իսկ երբեմն ավելի մեծ չափով են անդրադառնում գնի վրա: Վերջինս բացատրվում է հիմնականում օլիգոպոլիաների կողմից կիրառվող այն պրակտիկայով, երբ արտադրողը սկզբում նախատեսվածից ցածր գին է սահմանում, փորձելով ներգրավել ավելի մեծ թվով սպառողների, կախվածությունը առաջացնելով ծխելու նկատմամբ, իսկ հետագայում հարկերի բարձրացման դեպքում ավելացնում է վաճառքի գինն անհամեմատ ավելի մեծ չափով՝ այդպիսով մեծացնելով իր շահույթը:

Սակայն փաստ է, որ ցանկացած դեպքում հարկերի բարձրացումն այս կամ այն չափով ազդում է ծխախոտի մանրածախ գնի վրա և հանգեցնում է ծխողների թվաքանակի կրճատման: Կրճատման չափը տարբեր երկրներում նույնը չէ. առանձին երկրներում դրա գնահատման նպատակով իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ:

---

## **Հայաստան-Եվրամիություն. համեմատական վերլուծություն**

---


Հակաժխատության պայքարի առաջամարտիկ համարվող երկրներում վաղուց արդեն հարկերի բարձրացման ճանապարհով ծխախոտի գների աստիճանական ավելացումը դարձել է ոլորտում իրականացվող պետական երկարաժամկետ քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Ակնառու հաջողությունների արդեն իսկ հասել են թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Կանադայում և թե՛ մարդկային առողջությունը գերնպատակ հռչակած մյուս երկրներում: Քանի որ Հայաստանը եվրահիմնագրումը հռչակել է իր արտաքին քաղաքականության անկյունաքարերի շարքում և մեզանում արդեն իսկ արձանագրվում են խաղի եվրոպական կանոնների որդեգրման ու տեղայնացման ակտիվ աշխատանքներ շատ ոլորտներում, փորձենք հասկանալ, թե ուր է գնում Եվրամիությունը ծխախոտի հարկման քաղաքականության ասպարեզում, և ուր է գնում Հայաստանը:

Եթե համեմատելու լինենք Հայաստանի հետ, ծխախոտի գները Եվրոպական երկրներում (առնվազն վերջին տասնամյակի ընթացքում) միշտ էլ ավելի բարձր են եղել: Ինֆլյացիայի համեմատական ցածր մակարդակ ունեցող եվրոպական երկրներում ծխախոտի գները տարեցտարի նաև շարունակական առաջանցիկ աճի միտում են ցուցաբերել, ինչի հետևանքով այս երկրներում անընդհատ աճել են նաև ծխախոտի իրական գները: 2000-2004թթ. ժամանակահատվածն ընդգրկող 5 տարիների ընթացքում, օրինակ, ծխախոտի միջին իրական գների միջին եվրոպական աճը (Եվրամիության կազմում մինչև ընդլայնումը մտնող 25 երկրների միջին) կազմել է շուրջ 30 տոկոս (տե՛ս գծապատկեր 3): Սա նշանակում է, որ այլ հավասար պայմաններում ծխախոտը եվրոպական սպառողի համար 30 տոկոսով պակաս «հասանելի» է դարձել, ինչը որդեգրված կուրսի և վարվող պետական քաղաքականության գնահատման հստակ ցուցանիշ է:

Այլ պատկեր է Հայաստանի դեպքում: Ծխախոտի գները մեզանում ցածր են եղել, ցածր են և այսօր: Ավելին, վերջին տարիների ընթացքում

դրանք իրական արտահայտությամբ շարունակաբար նվազել են: Միայն 2000-2004թթ. ժամանակահատվածում ծխախոտի միջին իրական գները Հայաստանում ավելի քան 21 տոկոսով անկում են ապրել: Իբրև միտում, սա ուղղակիորեն հակառակ է եվրոպականին, ինչն ակնառու է դառնում նաև գծապատկեր 3-ից:

Գծապատկեր 3. Ծխախոտի միջին իրական գների փոփոխությունը (տոկոսներով) հինգ տարվա ընթացքում, Եվրամիության երկրներ և Հայաստան, 2000-2004թթ.:



Աղբյուրը. Եվրամիության երկրների համար՝ Եվրոստատ [epp.eurostat.ec.eu.int](http://epp.eurostat.ec.eu.int) Հայաստանի համար՝ ՀՀ ԱԿԾ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2004, 2005


Անշուշտ, ծխախոտի առավել կամ պակաս «հասանելիության» խնդիրը միայն գնային գործոնով չէ, որ պայմանավորված է: Այստեղ դեր ունի նաև բնակչության իրական եկամուտների դինամիկան: Հետևաբար ծխախոտի մատչելիության խնդիրը դիտարկելիս հարկ է ուսումնասիրել ծխախոտի իրական գների և բնակչության իրական եկամուտների համադրությունը: Այստեղ ևս իրերի դրությունը հոգուտ Հայաստանի չէ:

Դիտարկվող ժամանակահատվածում (2000-2004թթ.) Եվրամիության 25 երկրներում ծխախոտի իրական գների մոտ 30 տոկոս քանկացումն ուղեկցվել է բնակչության իրական եկամուտների 13.5 տոկոս ավելացմամբ (տե՛ս գծապատկեր 4): Այսինքն եկամուտների աճի համեմատ ծխախոտը քանկացել է առաջանցիկ տեմպերով, ինչը լիովին տեղավորվում է բնակչության առողջությանն ուղղված արդյունավետ քաղաքականության տրամաբանության շրջանակներում:

Հայաստանում պատկերը հակառակն է: Վերջին տասնամյակում Հայաստանի տնտեսությունն արձանագրում է բարձր տնտեսական աճի միտումներ, վեջին տարիների ընթացքում ՀՆԱ տարեկան աճը նույնիսկ երկնիչ թվերով է չափվում: Արդյունքում աճում են բնակչության եկամուտները: Միայն 2000-2004թթ. ընթացքում բնակչության իրական եկամուտները Հայաստանում աճել են ավելի քան 56 տոկոսով: Սա բնակչության կենսամակարդակի բարելավման տեսանկյունից իրապես ոգևորիչ է: Սակայն ցավով պիտի արձանագրել, որ տնտեսական վերելքին ուղղված արդյունավետ քաղաքականությունը Հայաստանում չի ուղեկցվել ծխախոտի գների համահունչ աճն ապահովող և հասարակական առողջության հետ սերտորեն առնչվող հարկային քաղաքականությամբ:

Արդյունքը երևում է գծապատկեր 4-ից: Եվրոպական Միությունում ծխախոտը տարեց տարի ավելի անհասանելի է դառնում բնակչության, հատկապես դրա առավել խոցելի խմբերի համար, իսկ Հայաստանում ճիշտ հակառակը՝ մահաբեր ապրանքը ավելի ու ավելի է մատչելի դառնում բոլորի համար:

Գծապատկեր 4. Ծխախոտի միջին իրական գների և բնակչության իրական եկամուտների փոփոխությունը հինգ տարվա ընթացքում, Եվրամիության երկրների միջինը և Հայաստան, 2000-2004թթ.:



Աղբյուրը. Եվրամիության երկրների համար՝ Եվրոստատ [app.eurostat.cec.eu.int](http://app.eurostat.cec.eu.int), Հայաստանի համար՝ ԴՀ ԱԿԾ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2004, 2005

## **Ծխախոտի հարկերի բարձրացման հնարավոր սցենարները Հայաստանում**

---

Ծխախոտի հարկումից գոյացող եկամուտները պետական բյուջեի էական մասն են կազմում, ինչը հաճախ շահարկվում է ծխախոտի արդյունաբերողների կողմից՝ օգտագործվելով որպես տնտեսության համար ծխախոտ արդյունաբերության ունեցած կարևոր դերի հաստատման փաստարկ: Միաժամանակ թյուր կարծիք կա այն մասին, թե ծխախոտի հարկերի բարձրացման հետևանքով դրա պահանջարկի կրճատման արդյունքում գոյացող ընդհանուր բյուջետային եկամուտները նույնպես կկրճատվեն: Միջազգային փորձը, սակայն, հակառակն է պնդում: Ծխախոտի հարկերի բարձրացման արդյունքում, ճիշտ է, տեղի է ունենում ծխողների թվի նվազում, բայց այդ նվազումը ամբողջությամբ փոխհատուցվում է հարկերի բարձրացման շնորհիվ: Նման քաղաքականություն կիրառող բոլոր երկրներում բյուջետային եկամուտները ոչ միայն չեն կրճատվել, այլև ավելացել են:

Փորձենք դուրս բերել ծխախոտի հարկերի բարձրացման այն սցենարը կամ սցենարները, որոնց դեպքում պետական բյուջեն եկամուտների տեսանկյունից առնվազն չի տուժում: Դրա համար մեզ նախ և առաջ հարկավոր է դուրս բերել ծխախոտի պահանջարկի կորը Հայաստանի համար, մինչդեռ Հայաստանում, ցավոք, հնարավոր չէ իրականացնել ծխախոտի գնային էլաստիկության ցուցանիշի հաշվարկ, քանի որ այստեղ չեն իրականացվել, օրինակ, ծխելու տարածվածությունը գնահատող պարբերական բնույթ ունեցող հետազոտություններ: Առանց այդ ցուցանիշի ժամանակագրական շարքերի հնարավոր չէ կարծիք կազմել ծխախոտի օգտագործման ծավալների վրա գների աճի հնարավոր ազդեցության վերաբերյալ:

Ստեղծված իրավիճակում հնարավոր լուծում է միջազգայնորեն ընդունված համադրելի մոդելների կիրառումը: Տնտեսագետ Չալուպկան առաջարկում է Հայաստանի եկամուտների մակարդակին համադրելի եկամուտներով երկրներում կիրառել գնային էլաստիկության  $-0.08$  ցուցանիշը: Միևնույն ժամանակ  $-4$  տոկոս ցուցանիշ է առաջարկվում Հա-

յաստանի նման կրթական մակարդակ, բայց եկամուտներով ավելի բարձր երկրների համար: Սա նշանակում է, որ հետագա հաշվարկների համար սխալված չենք լինի, եթե գնային էլաստիկության տեսանկյունից մնանք այս հատվածում:

Այսպիսով, Հայաստանի համար չունենք ծխախոտի պահանջարկի էլաստիկության հաշվարկ, բայց նման հաշվարկ առկա է մի շարք այլ երկրների համար: Գների բարձրացման դեպքում շուկայի հնարավոր արձագանքը գնահատելու համար կարող ենք Հայաստանի և այլ դիտարկվող երկրների ցուցանիշները համադրել՝ օգտագործելով գնողունակության պարիտետները:

Այժմ, հիմնվելով 4 տարբեր երկրների (Չինաստան, Ինդոնեզիա, Թուրքիա, Էստոնիա) ծխախոտի պահանջարկի ցուցանիշների վրա, փորձենք կառուցել Հայաստանում ծխախոտի պահանջարկի կորը: Այս երկրները մի կողմից գտնվում են գնային էլաստիկության «ապահով»<sup>2</sup> միջակայքում (-0.05-ից -0.03), իսկ մյուս կողմից այդ միջակայքում ցուցադրում են ընդգծված տարբեր վարքագծեր: Ընդ որում, կորը կառուցելիս մեր կողմից հաշվի են առնվել նաև հարկման տեսանկյունից առավել «ապահով» ֆիսկալ ենթադրություններ:

### **Ենթադրություն 1.**

- Այլ հավասար պայմանների դեպքում կարելի է պնդել, որ ծխախոտ սպառողների վարքագծի հիմնական տարբերությունները միայն եկամուտների մակարդակի և ծխախոտի գների մեջ է:
- Եկամուտների մակարդակի աճը կամ նվազումը հանգեցնում է պահանջարկի կորի զուգահեռ տեղաշարժման<sup>3</sup>:
- Գին/ծավալ համակցության առումով տարբեր երկրներ գտվում են շուկայական հավասարակշռության տարբեր կետերում:

<sup>2</sup> «Ապահով» ասելով նկատի ունենք այն միջակայքը, որը չի ենթադրում կամ չի հանգեցնի գների թեկուզ փոքր փոփոխության արդյունքում պահանջարկի կտրուկ փոփոխությունների:

<sup>3</sup> Քանզի հնարավոր չէ դուրս բերել Հայաստանի պահանջարկի կորի ճշգրիտ պատկերը, ապա դժվար է ասել, թե ներկայացված 4 երկրներից որին է առավել մոտ այդ կորի թեքությունը: Քանի որ մեզ հետաքրքրում է միայն ներկայացվող էլաստիկության միջակայքը, այս դրույթը հնարավորություն է տալիս ստանալ պահանջարկի փոփոխության հաշվարկի նվազագույն և առավելագույն սահմանները:


- Գների համադրման համար նպատակահարմար չէ կիրառել շուկայական փոխարժեքը: Ավելի իրական պատկեր կստացվի գնողունակության պարիտետների կիրառման դեպքում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է օգտվել համադրվող երկրների հետևյալ ցուցանիշներից.

- համադրված պարիտետներով գին,
- նշված գնի դեպքում պահանջարկի փոփոխություն 10% քայլի (S) դեպքում:

Որպեսզի վերոնշյալ 4 երկրների ցուցանիշների հիման վրա դուրս բերենք Հայաստանի համար համադրելի պահանջարկի կորերը, վերցնենք պահանջարկի կորի ընդհանուր տեսքը:

Գծապատկեր 5. Պահանջարկի կորի ընդհանուր տեսքը



Գծապատկեր 5-ում  $X_1$  կետը ծխախոտի գինն է հարկերի բարձրացումից առաջ, որին համապատասխանում է սպառման  $Y_1$  ծավալ: Հարկերի բարձրացման արդյունքում ծխախոտի գնի 10% թանկացման արդյունքում ( $X_2 = X_1 \cdot 10\%$ ) ծխախոտի պահանջարկը նվազում է մինչև  $Y_2$ , ընդ որում  $Y_2 = Y_1 \cdot E$ , որտեղ  $E$ -ն էլաստիկությունն է:

Այստեղ ունենք հետևյալ բանաձևերը.

$$A \cdot X_1 + B = Y$$

$$A \cdot \frac{X_2}{(1+S)} + B = \frac{Y_2}{1+E}$$

$$A \cdot X_2 + B = Y_2$$

Լուծելով վերոնշյալ հավասարումները A, B գործակիցների և  $Y_2$  -ի համար՝ կստանանք հետևյալ համակարգը.

$$(A, B, Y_2) \rightarrow \left[ \begin{array}{l} E \cdot Y_1 \cdot \frac{(1+S)}{(-X_2 \cdot E + E \cdot X_1 + S \cdot E \cdot X_1 + S \cdot X_2)} \\ Y_1 \cdot X_2 \cdot \frac{(-E+S)}{(-X_2 \cdot E + E \cdot X_1 + S \cdot E \cdot X_1 + S \cdot X_2)} \\ X_2 \cdot Y_1 \cdot S \cdot \frac{(1+E)}{(-X_2 \cdot E + E \cdot X_1 + S \cdot E \cdot X_1 + S \cdot X_2)} \end{array} \right]$$

Հնարավոր սխալի տոկոսը նվազեցնելու նպատակով մնանատիպ հավասարումներ լուծվել են մի քանի երկրների տվյալների օգտագործմամբ.

Աղյուսակ 1. Մի քանի երկրների ծխախոտի պահանջարկի կորերի դուրս բերման և համադրելիության ապահովման հիմնական ցուցանիշները


Երկիր	Խնդրոնեզիա	Թուրքիա	Չինաստան	Եստոնիա
Գնողունակության պարիտետ (տեղական արժույթ/միջազգային դոլար)	2,643.72	618,292.93	1.99	6.42
Գին	3,406.25	1,108,385.0	2.06	17.00
Էլաստիկություն- E	(0.05)	(0.04)	(0.05)	(0.03)
Գնողունակության պարիտետով ճշտված գին- X2	180.60	251.28	145.10	371.34

Աղյուսակ 2. Հայաստանի ծխախոտի պահանջարկն այլ երկրների հետ համադրելիությունը ապահովող ցուցանիշներով

	Հայաստան
Գնողունակության պարիտետ (տեղական արժույթ/միջազգային դոլար)	140.2
Գին (դրամ) - $X_1$	183.2
Հարկի մեծությունը	22681
Ծավալ - $Y_1$	4579.5
քայլը-S	0.1

Ընտրված երկրների համար պարիտետային գներով (դրամ) պահանջարկի կորերը ստանում են հետևյալ տեսքը.

Գծապատկեր 6. Որոշ երկրների պահանջարկի կորերն արտահայտված պարիտետային գներով



Փաստորեն ստացանք, որ Հայաստանի պահանջարկի կորը կարող է գտնվել գծապատկեր 6-ում արտացոլված կորերի միջակայքում:

Այժմ, հիմք ընդունելով պահանջարկի կորը՝ փորձենք գնահատել գնի և պահանջարկի փոփոխությունները և հաշվարկել հարկման դրույքաչափի փոփոխության սցենարները.

**Ենթադրություն 2.** Հարկերի բարձրացման դեպքում հարկային բեռի ողջ ծանրությունն ընկնում է սպառողների վրա (նշված ենթադրությունը հիմնվում է համաշխարհային փորձի վրա, ինչպես արդեն նշվել է վերևում):


Որպեսզի հաշվենք, թե հարկի յուրաքանչյուր դրույքաչափի դեպքում որքան հարկային եկամուտներ կապահովվեն, անհրաժեշտ է հարկերի փոփոխությունը տեղադրելով ծխախոտի պահանջարկի կորի (կորերի) վրա, դուրս բերել մի շարք, որը կկոչենք հարկային եկամտի կոր (կորեր):

Աղյուսակ 3. Հարկի տարբեր դրույքաչափերի դեպքում հավաքվող հարկային եկամուտներն ըստ պարիտետային գների տարբեր երկրների պահանջարկի կորերի պայմաններում

Հարկը՝ մեկ հատիկի վրա ՀՀ դրամ	մլն դրամ			
	Թուրքիա	Ինդոնեզիա	Եստոնիա	Չինաստան
4.95	22,681.00	22,681.00	22,681.00	22,681.00
5.87	26,044.88	25,319.08	26,440.14	24,369.43
6.88	29,445.56	27,659.71	30,418.12	25,323.04

7.98	32,823.82	29,555.26	34,603.84	25,278.58
9.20	36,101.28	30,818.62	38,978.16	23,906.63
10.55	39,175.77	31,213.99	43,511.65	20,796.60
12.02	41,915.51	30,445.78	48,161.79	15,438.48
13.64	44,152.19	28,144.97	52,869.53	7,200.69
15.43	45,672.32	23,852.58	57,555.09	
17.39	46,206.80	16,999.54	62,112.71	
19.55	45,418.14	6,882.20	66,404.35	
21.93	42,884.97		70,251.85	
24.54	38,083.04		73,427.38	
27.42	30,362.22		75,641.84	
30.58	18,918.51		76,530.63	
34.06	2,759.95		75,636.26	
37.88			72,387.31	
42.09			66,072.64	
46.72			55,810.08	
51.81			40,508.42	
57.42			18,821.04	

Գծապատկեր 7. Հարկային եկամտի կորերը




Վերը նշված գծապատկերում պատկերված կորերը, փաստորեն, ստացվել են Հայաստանի համապատասխան ցուցանիշները համադրելով մի քանի երկրների ցուցանիշների հետ, այսինքն բոլոր 4 կորերն արտացոլում են Հայաստանում ծխախոտի գների հնարավոր բարձրացման դեպքում (խոսքը վերաբերում է միայն հարկերի բարձրացմամբ պայմանավորված գների բարձրացման մասին. տե՛ս ենթադրություն 2) հարկային եկամուտների փոփոխության տարբեր հաշվարկներ, որոնք կարող

են գնահատվել իբրև լավատեսական (Էստոնիա) և պահպանողական (Չինաստան):

Բոլոր սցենարների դեպքում էլ ակնհայտ է, որ հարկային եկամուտները կաճեն հարկային բեռի նույնիսկ առնվազն կրկնակի աճի դեպքում:

Գծապատկեր 8. Լորենսի կորը ծխախոտի համար



Կախված այն բանից, թե ինչ սկզբունք է դրվում հարկային քաղաքականության առջև, հնարավոր են հարկերի բարձրացման երկու առաջարկվող սցենար (եվան կետը  $X_1$ ).

1. առավելագույն հարկային եկամուտներ ապահովելու նպատակով պետք է ձգտել  $A_2$  կետին, որն ապահովում է  $Y_2$  առավելագույն եկամուտ,  $X_2$  գնի դեպքում,
2. հանրային առողջապահության տեսանկյունից դիտարկելու դեպքում կարող է առաջարկվել գները բարձրացնել ընդհուպ մինչև  $X_3$  (կամ սահմանել այն  $X_2$ - $X_3$  միջակայքում): Այս դեպքում եկամուտների հավասար կամ ավելի մեծ մակարդակի դեպքում կունենանք առավել բարձր գին, հետևաբար ավելի քիչ թվով ծխողներ:

Նշվածը կիրառելով Հայաստանի նկատմամբ կստանանք հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 4. Հայաստանի համար հարկային դրույքաչափի փոփոխության այն մակարդակները, որոնք ապահովում են հարկային եկամուտների աճ՝ ըստ ծխախոտի պահանջարկի տարբեր կորերի և քաղաքականության նպատակադրումների

	Պահպանողական սցենար	Միջին սցենար	Լավատեսական սցենար
Հարկային եկամուտների մաքսիմալացման տեսանկյուն	200%	350%	600%
Հանրային առողջապահության տեսանկյուն	310%	620%	1100%

Տեսության և այլ երկրների փորձի հիման վրա կատարված հաշվարկները, փաստորեն, վկայում են, որ 1000 հատիկ ծխախոտից այսօր Հայաստանում հարկվող 5000 դրամ հարկի դրույքաչափն առնվազն 10000 դրամի հասցնելն այն նվազագույն քայլն է, որ թույլ կտա, ավելացնելով պետբյուջեի եկամուտները, քայլ անել դեպի հանրային առողջությանն ուղղված ավելի արդյունավետ քաղաքականություն:

## Հղումներ

1. Peto R. & Lopez A. Future worldwide health effects of current smoking patterns. In: Koop, C.E. ET AL. ed. *Critical issues in global health*. San Francisco, Jossey-Bass (2000)
2. ANGUIS, M. ET DUBEAUX, D. Les fumeurs face aux récentes hausses du prix du tabac, *INSEE Première*, 551: October, 1997.
3. PRABAT, J. & CHALOUKKA, F.J. *Tobacco Control in Developing Countries*. Oxford, Oxford University Press, 2000.
4. JHA, P. ET AL. Death and Taxes: Economics of tobacco control. *Finance and Development*. Washington, International Monetary Fund, 1999.
5. TOWNSEND, J. L. The role of taxation policy in tobacco control. in: ABEDIAN, I. ET AL., eds. *The Economics of Tobacco Control: Toward an Optimal Policy Mix*. Cape Town, Applied Fiscal Research Centre, University of Cape Town, 85-101 (1998).
6. *Curbing the epidemic. Governments and the economics of tobacco control*. Washington, DC, World Bank, 1999.
7. CHALOUKKA, F.J. ET AL. Public policy and youth smokeless tobacco use. *South Econ Journal*, 64: 501–516 (1997).
8. CHAPMAN, S. & RICHARDSON, J. Tobacco excise and declining consumption. *American Journal of Public Health*, 80: 537–40 (1990).
9. SUNLEY, E.M. ET AL. *The design, administration and potential revenue of tobacco excises*. In: JHA, P. & CHALOUKKA, F.J. *Tobacco control in developing countries*. Oxford University Press, New York, 409–426 (2000).
10. *RAISING CIGARETTE TAXES REDUCES SMOKING, ESPECIALLY AMONG KIDS (AND THE CIGARETTE COMPANIES KNOW IT)*, Campaign for Tobacco-Free Kids, January 31, 2005/ Eric Lindblom

Սույն գրքույկը տպագրվել է Հայաստանում Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի կողմից Մարդկային զարգացման միջազգային կենտրոնին տրամադրված դրամաշնորհի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների եւ վերլուծությունների հիման վրա: Այն փաստարկում է Հայաստանում ծխախոտի հարկման դրույքաչափերի ավելացման անհրաժեշտությունը և առաջ քաշում համապատասխան սցենարներ:

This publication was supported by a grant of the Open Society Institute Assistance Foundation. It advocates for the need to raise tobacco taxes in Armenia and suggests relevant scenarios. The project has been conducted by the International Center for Human Development.

**Երևան 2005**